խնդրելու համար, և նշանով սաստեցի նորան որ կանգնի. յետոյ դառնալով դէպի պահապանը հարցրի:

«Այս կողմերը չ'կան արդեօք հին շինուածքներ, խաչարձաններ, գրքեր»:

—«Շատ կան», պատասխանեց ծերուկը, ձեռքը դէպի աջ ու ձախ շրջելով:

«Եթէ մենք վերադառնանք», կրկնեցի ես, «քարայրում մեզ գիշերելու տեղ և հաց կըտան»:

—«Սէր սարան սարան ճաւան», իմ դլխիս ու աչքիս վերայ, կեղծաւորութեամբ գլուխը խոնարհեցնելով և աջ ձեռքը սրտին դնելով պատասխանեց պահապանը: Բրօն, որ իմ միտքս հասկացել էր, սկսեց գովաբանել նոցա հիւրասիրութիւնը:

Թօսք տալով, որ երեկոյին կ'վերադառնանք, մենք սկսեցինք ծանր ծանր հեռանալ. մի քանի քայլերից զկնի արդէն ժայռերը ծածկել էին մեզ չար ու բարի աչքերից: Մի ժայռի պատառուածքի արանքից Բրօն ինձ ցոյց տուեց այրի մուտքը, ուր կանգնած էին մօտ երեսուն հոգի զինեալ քըրդեր. և նոքա նայում էին մեր բռնած ուղղութեան վերայ, ինչպէս արծիւը նայում է իւր որսի վերայ:

«Շատ ուշ, մռմռաց Բրօն»:

—«Դրանք ինչ են ուզում», հարցրի ես:

«Դրանք կամ մեր ճանապարհը կ'կտրեն, կամ մեր ետեւից կ'ընկնեն. մեզ մնում է միայն շտապել և մեր բռնած ուղղութիւնը փոխել: